ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

գ.Նոր կյանք
հեռ. (0234)-62901

29 .01.2019թ.

N 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Գ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Արարատի մարզի Նոր Կյանք համայնքի ավագանու 22.01.2019 թվականին կայացած հերթական նիստի թիվ 1- 5 –Ն որոշումների կրկնօրինակները:

Առդիր 28 /քսանութ / թերթ:

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատ. Ք. Սեդրակյան
Հեռ. /0234/ – 62901

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 1

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝

Ավագանին որոշում է .

Հաստատել Նոր Կյանք համայնքի ավագանու թիվ 1 հերթական նիստի օրակարգը.

1.Նոր Կյանք համայնքի 2019-2023 թվականների սոցիալ-զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին:

2.Նոր Կյանք համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2018 թվականի ֆինանսական գործունեության վերաբերյալ :

3.Նոր Կյանք համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:

4.Տարեվերջյան գույքագրում կատարելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՄՄԱ
ԱՄԻՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՂՎԱՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 2

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով՝

Ավագանին որոշում է՝

Հաստատել Նոր Կյանք համայնքի 2019-2023 թվականների սոցիալ-զարգացման հնգամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի.

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՄՄԱ
ԱՄԻՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՂՎԱՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
22.01.2019 ԹԻՎ 2 ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
2019-2023թթ.ՍՈՑԻԱԼ- ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ՆՈՐ ԿՅԱՆՔ 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……

1. Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում……
2. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶՔԾ-ի հիմնական նպատակների սահմանում……
3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում……
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում….
5. Համայնքի գլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում……
6. ՀԶՔԾ-ի իրականացման մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման ձևաչափերը……

Եզրափակում……

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնքի 2019-2023թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից:

Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.

համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի բովանդակությունը պայմանավորված է համայնքապետարանի աշխատակազմի աշխատակցների աշխատանքով և առաջարկություններով, համայնքում առկա ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությամբ, ինչպես նաև այն իրողությամբ, որ Նոր Կյանք համայնքը ունի մի շարք առաջնային խնդիրներ : Համայնքի զարգացման հնգամյա ծրագրում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, արտադրության , փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը) և դրանց կառավարման միջոցառումները:

2019-2023թթ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները: Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված Հայաստանի Հանրապետության ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների, կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում համայնքի զարգացման հնգամյա ծրագրում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

Համայնքի զարգացման, բնակչության սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովման, սոցիալ-մշակութային քաղաքականության ներդրման և բարեկեցության մակարդակի բարձրացման

նպատակով համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը հանդիսանալու է ամենօրյա աշխատանքային փաստաթուղթ:

1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատում

Նոր Կյանք ակտիվ կյանքով ապրող համայնք է, որտեղ առկա բոլոր կենցաղային, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային խնդիրները գտնում են իրենց լուծումը, համայնքի յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունի ակտիվորեն մասնակցելու համայնքում որոշումների կայացմանը և գործողությունների իրականացմանը:

1.2Համայնքի աշխարհագրական դիրքը.պատմական ակնարկ

Նոր Կյանք համայնքը գտնվում է Արարատի մարզում, հիմնադրվել է 1946 թվականին : Գյուղը հիմնադրվել է հիմնականում Իրանից ներգաղթյալ ընտանիքների համար, իսկ հետագայում բնակչությունը ավելացել է Հարաստանի տարբեր տարածաշրջաններից տեղափոխվածբնակիչների հաշվին : Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 850 մ բարձրության վրա : Նոր Կյանք գյուղը մարզկենտրոնից գտնվում է 8 կմ . հեռավորության վրա , իսկ Երևան քաղաքից 30կմ. գյուղը ունի 790 տնտեսություն , բնակչության ընդհանուր թիվը կազմում է 2609 մարդ : Համայնքը տեղակայված է Արարատյան դաշտում: Գյուղի կլիման մեղմ է , չոր ցամաքային չափավոր ցուրտ ձմեռ և շոգ ամառ : Ձմեռը սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է 20 - ° - ից 25 - ° , ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր , օրի միջին ամսական ջերմությունը հասնում է 24 ° -ից 26 ° , իսկ առավելագույնը՝ 42° :

Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է ոռոգման գոտում:

Համայնքի մասնագիտացված ճյուղը գյուղատնտեսությունն է, համայնքում հիմնականում զարգացած է բանջարաբուծությունը և պտղաբուծությունը :

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման և խմելու ջրի հիմնախնդիրը՝ ջրատարների կիսախողովակների և ցանցերի վերանորոգումը :

1.3ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 2609 մարդ, այդ թվում տղամարդիկ՝1305 և կանայք՝ 1304 : Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը բերված է աղյուսակ 1-ում:

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը
1	2	3
1	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	2609
	Տղամարդիկ	1305
	Կանայք	1304
	0-6 տարեկան , այդ թվում՝	210
	- 0-2 տարեկան	79
	- 3-6 տարեկան	131
	7-17 տարեկան	306
	18-63 տարեկան	1673
	63-ից բարձր տարեկան	210
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	320

	Տարիքային և աշխատանքային	126
3.	Փախստականներ	0
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	1
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	14
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	2
	Մանկուց հաշմանդամներ	2
9.	Աշխատունակներ	
10.	Զբաղվածներ	
11.	Գործազուրկներ, այդ թվում՝	
	Գրանցված	
12.	Առկա տնային տնտեսությունների թիվը	790
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը, այդ թվում՝	54
	Նպաստառու ընտանիքների թիվը	54
14.	Հայրենական մեծ և արցախյան պատերազմ-ներում զոհվածների ընտանիքների թիվը	3
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	0
	Անօթևան ընտանիքներ	0
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	0
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	132
18.	Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը	488

1.4Տեղական ինքնակառավարման մարմիններ

Ժողովրդի իշխանությունը իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար և համայնքի ավագանի 5 տարի ժամկետով: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և Տեղական ինքնակառավարման մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ: Համայնքի ղեկավարն պաշտոնապես ներկայացնում է համայնքը, համայնքի գործադիր մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ: Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով: 2016թվականի սեպտմբերի 18 – ի ՏԻՄ ընտրությունների արդյունքում ընտրվել է համայնքի ղեկավար և ավագանին՝բաղկացած 7 անդամից: Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը բերված է ստորև՝

Համայնքի ղեկ. տեղակ.	Աշխատ. քարտուղար

1.Գլխավոր մասնագետ	1 հաստիքային միավոր
2.Առաջատար մասնագետ	1 հաստիքային միավոր
3.Առաջին կարգի մասնագետ	1 հաստիքային միավոր
4.Երկրորդ կարգի մասնագետ	1 հաստիքային միավոր
5.Վարորդ	1 հաստիքային միավոր
6.Հավաքարար	1 հաստիքային անկապարտեզի
7.Անասնաբույժ	0.5 հաստիքային միավոր

1.Մշակույթի տան տնօրեն	1 հաստիքային միավոր
2.Գրադարանավար	1 հաստիքային միավոր
3.Մարզիչ	1 հաստիքային միավոր
4.Հոգևորական	2 հաստիքային միավոր
5.Հավաքարար	1 հաստիքային միավոր
6.Պահակ	1 հաստիքային միավոր
7.Սգեպան	1 հաստիքային միավոր

1.Մանկապարտեզի տնօրեն	1 հաստիքային միավոր
2.Դաստիարակ	2.5 հաստիքային միավոր
3.Դաստիարակի օգնական	2.2 հաստիքային միավոր
4.Խոհարար	1 հաստիքային միավոր
5.Հաշվապահ	0,5 հաստիքային միավոր
6.Երաժշտության դասատու	0,5 հաստիքային միավոր
7.Բուժքույր	0,5 հաստիքային միավոր
8.Տնտեսվար	0,5 հաստիքային միավոր
9.Խոհարարի օգնական	0,5 հաստիքային միավոր
10.Օժանդակ բանվոր	0.5 հաստիքային միավոր

1.5 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքն ունի սեփականություն, որի իրավունքը պաշտպանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով: Համայնքի սեփականություն կարող են լինել անշարժ և շարժական գույքը, դրամական միջոցները և այլն: Համայնքապետարանը գտնվում է համայնքի կենտրոնում, տեղադրված է մշակույթի տան շենքում: Շենքային պայմանները բավարար են, գույքը նորացված, համալրված է համակարգչային տեխնիկայով: Գյուղը չունի գյուղտեխնիկա և այլ գյուղատնտեսական գործիքներ : Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1982 թվականին , որի մաշվածությունն այնքան մեծ է, որ ջրի կորուստի չափը գնալով մեծանում է :
Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի , անհրաժեշտ է վերանորոգել ճանապարհներ և փողոցներ :
Ստորև ներկայացված է 14.02.2018 թվականի դրությամբ համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը.

Հ/Հ	Անվանումը	Չափ. միավ	Քանակը	Հիմն.Միջոց Միասնական Ֆոնդ 12.2015թ.	Բալանսային Մնացորդային Արժեք 12.12.2016թ.	մաշվածք 12.12..2016թ.	Մուտք 2016թ.	Հաշվարկվել է մաշվածք 2016թ-ի վերջին	Հիմն.Միջոց Միասնական Ֆոնդ 12.12.2016	Բալանսային Մնացորդային Արժեք 12.12.2016	մաշվածք 12.12.2016
					Շենք, շինություն						
1	Կուլտուրայի տուն	հատ	1	11996.9	11996.9				1196.9	11996.9	
2	Մանկապարտեզի շենք	հատ	1	9580.4	9580.4				9580.4	9580.4	
3	Գրասենյակի շենք	հատ	1	300.0	300.0				300.0	300.0	
4	Հուշարձան	հատ	1	2900.0	2900.0				2900.0	2900.0	
5	Կաթսայատան շենք	հատ	1	5430.0	5430.0				5430.0	5430.0	
6	Փողոցների լուսային ցանց			11989.5	11989.5				11989.5	11989.5	
7	Կանգառապատ	հատ	3	684.0	684.0				684.0	684.0	
	ընդամենը			32880.8	32880.8				32880.8	32880.8	
					Համայնքապետարանի գույք						
1	Գրասեղան	հատ	1	80,0	80.0				80,0	80.0	
2	Գրասեղանի աջակի սեղան	հատ	1	60.0	60.0				60.0	60.0	
3	Գրասրան դիմացի	հատ	1	40,0	40.0				40.0	40.0	
4	Բազմոց	հատ	1	100.0	100.0				100.0	100.0	
5	Բազկաթոռ	հատ	2	100.0	100.0				100.0	100.0	
6	Փայտյա աթոռներ	հատ	12	144.0	144.0				144.0	144.0	
7	Աթոռ պտտվող	հատ	1	56.0	56.0				56.0	56.0	
8	Համակարգչի սեղան	հատ	2	100.0	100.0				100.0	100.0	

9	Շերտավարագույր	հատ	3	121,1	121.1				121.1	121.1	
10	Սրբիչաթակ պահարան	հատ	7	15.9	15.9				15.9	15.9	
11	Հեռուստացույց	հատ	1	412.0	412.0				412.0	412.0	
12	Հեռուստացույցի անտենա	հատ	1	27.5	27.5				27.5	27.5	
13	Էջուր կիսապատվող	հատ	4	34.0	34.0				34.0	34.0	
14	Հովհարիչ	հատ	1	13.0	13.0	-		-	13.0	13.0	-
15	Համեմարգիչ	հատ	1	604.0	604.0	-		-	604.0	604.0	-
16	Մառեարան	հատ	1	176.0	176.0	-		-	176.0	176.0	-
17	Համեմարգչի սեղան	հատ	1	78,0	78,0				78,0	78,0	
18	Համակարգիչ	հատ	1	212.0	212.0				212.0	212.0	
19	Գրասեղան	հատ	2	160.0	160,0				160.0	160.0	
20	Պատվանդան հոուստացույցի	հատ	2	64.0	64.0				64.0	64.0	
21	Լարդա պրիորա	հատ	1	6350.0	6350,0				6350,0	6350.0	
22	Մոնիտոր	հատ	2	160.0	160,0	-	-	-	160,0	160,0	-
23	Գրասեղան	հատ	1	55.0	55.0	-			55,0	55,0	
24	Օդորակիչ	հատ	1	530,0	530,0	-	-	-	530,0	530,0	
25	Համակարգիչ	հատ	2	244.0	244.0				244.0	244.0	
26	Մոնիտոր	հատ	2	82.0	82.0	-	-	-	82,0	82,0	
27	Ա/Վ ԵՌՈԳ	հատ	1	0	-	-	-	-	0	0	0
28	Բազմաֆունկցիոնալ տպիչ	հատ	1	70.0	70.0				70.0	70.0	
29	Սեղան	հատ	1	100,0	100,0				100,0	100,0	
30	Կրակմարիչ ՕՊՏ	հատ	2	44.0	44.0				44.0	44.0	
31	Կրակմարիչ ՕՊՇ	հատ	1	20.0	20.0				20.0	20.0	
32	Կրակմարիչ ՕՊՇ	հատ	5	80.0	80.0				80.0		
33	Հրշեջ վահանակ	հատ	1	55.0	55.0				55.0	55.0	
34	Գրաչափ	հատ	1	7.8	7.8				7.8	7.8	
35	Ջրի սման	հատ	2	10.0	10.0				10.0	10.0	
36	Դյուրակիր համակարգիչ	հատ	1	209.0	209.0				209.0	209.0	
37	Համակարգիչ	հատ	1	100.0	100.0				100.0	100.0	
38	Ջրի սարք	հատ	1	0.0	0.0				0.0	0.0	
39	Տրակտոր Բելարուս	հատ	1	9600.0	9600.0				9600.0	9600.0	
40	Գութան	հատ	1	670.0	670.0				670.0	670.0	
	Ընդամենը			20984.3	20984.3				20984.3	20984.3	

Formatted: Left

1.6 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նոր Կյանք համայնքը չունի գլխավոր հատակագիծ և գոտիավորման նախագիծ, սեյսմիկ ռիսկային քարտեզ: Քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթերից առկա է քաղաքաշինական կադաստրի վարման մատյանը, քաղաքաշինական կանոնադրություն և այլն: Համայնքը չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի): Նոր կյանք համայնքում կանոնավոր կերպով իրականացվում է աղբահանություն՝ շաբաթը մեկ անգամ : Աղբահանությունը կատարվում է «Մաքուր երկիր» ՍՊԸ-ի կողմից: Կազմված է աղբահանության գրաֆիկ, որը պահպանվում է խստորեն:

Նոր Կյանք համայնքում կենտրոնական՝ Արարատյան և Բարեկամության փողոցներն ասֆալտապատված են ցերեկային լուսավորությամբ : Գերեզմանատունը մասնակի ցանկապատված է, 2015թվականին գերեզմանատուն տանող ճանապարհը խճապատվել է : Համայնքը գազաֆիկացված է, բնակչությունը ամբողջությամբ օգտվում է կապույտ վառելիքից: Համայնքին խմելու ջուր մատակարարվում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի «Վեդի»տեղամասի կողմից՝ օրական 6 ժամ: :

1.7 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում չկան բազմաբնակարան բնակելի շենքեր, կան միայն բնակելի առանձնատներ: Բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 41570քմ: Համայնքում առանձնատների թիվը՝ 559 և դրանց ընդհանուր մակերեսը՝ 75300,0 քմ:

Համայնքի առանձնատների մեծ մասը վերանորոգված են, նորաբաժան ընտանիքների համար անհրաժեշտ են նոր առանձնատներ: Սակայն, բնակչության սոցիալական վատ պայմանների պատճառով առանձնատների կառուցման և վերանորոգման աշխատանքներ կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքերում, իսկ նոր առանձնատներ հուձախանի չեն կառուցվում:

1.8 Զբաղվածություն

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ մշակում են իրենց ընտանիքներին սեփականաշնորհված և տնամերձ հողամասերը:Սեփականաշնորհված հողամասի մեկ բաժինը կազմում է 3200քառ մ /ներառյալ տնամերձ հողամասը/:Չափահաս բնակչության մեծամասնությունը մեկնում է արտագնա աշխատանքների: Աշխատանքների պակասը և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները խթանում են բնակչության արտագնա աշխատանքի մեկնելուն:

Համայնքի տարածքում գործում են 6 խառը խանութներ,1 տնտեսական խանութ,1 դեղատուն:

Բնակիչների հիմնական եկամուտը ստացվում է սեփականաշնորհված վարելահողերի և տնամերձ հողամասերի մշակումից, թոշակների և նպաստների ստացումից: Այս հիմնախնդիրների հաղթահարման հիմնական ճանապարհը ինտենսիվ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվելն է, ջերմոցային տնտեսությունների ստեղծումը:

1.9 Հողօգտագործում

Համայնքի վարչական տարածքը կազմում է 496,9 հա, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 336,5 , բնակելի շինությունների տակ հողեր՝ 143,5 հա, արդյունաբերական, արտադրական շինությունների տակի հողեր՝ 5,9 հա, Էներգետիկայի, կապի, տրանսպորտի տակի հողեր՝ 8,8 հա, հատուկ պահպանվող տարածքներ՝ 2,05 հա:

1.10 Գյուղատնտեսություն

Համայնքում զբաղվածության հիմնական ճյուղը հողամշակությունն է , զբաղվում են բանջարա- բոստանային մշակաբույսերի, մասսամբ՝ առվույտի մշակությամբ: Համայնքում անասնապահությամբ զբաղվում են 31 ընտանիք

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1	2	3
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, այդ թվում՝	153
	Կովեր	60
2.	Խոզերի գլխաքանակը	209
3.	Ոչխարների և այծերի գլխաքանակը	35
4.	Ավանակների և ջորիների գլխաքանակը	0
5.	Ձիերի գլխաքանակը	1
6.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	6089
7.	Նապաստակների և ճագարների գլխաքանակը	74
8.	Մեղվարնտանիքների քանակը	120

1.11. Բնության և շրջակա միջավայրի պահպանություն

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը նորմալ կեսագործունեության ամենաանհրաժեշտ գործոնն է, որի հետևանքով էլ համայնքի կարևորագույն խնդիրներից մեկը՝ ազգաբնակչության կենցաղային աղբի տեղափոխման հարցը կազմակերպելն է, որն էլ կատարվում է «Մաքուր երկիր» ՍՊԸ-ի միջոցով՝ բարձր մակարդակով, առանց ընդհատումների:

1.12ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը կենտրոնին կապող միջհամայնքային ճանապարհները հիմնականում ասֆալտապատ են: Ներհամայնքային ճանապարհների մոտ 60 %-ը բարեկարգ են, խճապատված, սակայն կարիք ունեն մշտական նորոգումների, Համայնքում տեղադրված չեն ճանապարհային երթևեկության նշաններ: Համայնքի տարածքով անցնում են երթուղային ավտոբուսներ և միկրոավտոբուսներ մեկ ժամում՝ մեկ հատ պարբերականությամբ: Միջհամայնքային, ներհամայնքային և միջպետական ճանապարհները անցանելի են և գտնվում են բարվոք վիճակում:

1.13 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի մեկ միջնակարգ դպրոց , կառուցվել է 1975 թվականին , որը կոսմետիկ վերանորոգվել է 2009թվականին, տանիքը հիմնովին վերանորոգվել է, փոխվել են բոլոր լուսամուտները պետական բյուջեի միջոցների հաշվին, շենքը գազաֆիկացված է : Դպրոցի տարածքը 0, 72 հա : Համայնքի աշակերտների թիվը 253 , դպրոցը ունի 51 աշխատող , ուսուցիչների թիվը՝ 35 , որից 33-ը՝ բարձրագույն կրթությամբ: Համայնքն ունի մանկապարտեզ, որտեղ գործում են երկու խումբ, աշխատում են 14 մարդ :

1.14 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի բուժամբուլատորիա , որը տեղակայված է 1948 թվականին կառուցված շենքում, որը չունի տարրական պայմաններ՝ ջեռուցում, տաք և սառը ջուր : Այն ունի

խիստ վերանորոգման կարիք: Բուժամբուլատորիան ունի 8 աշխատող , չունի անհրաժեշտ գույք և սարքավորումներ :

1.15 ՄՇԱԿՈՒՅԹ ՄՊՈՐՏ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի մշակույթի տուն , որը կապիտալ վերանորոգված է և ունի լոկալ ջեռուցում, որտեղ մշտապես գործում են պարի, նկարչության և դաշնամուրի խմբակները: Սպորտ հրապարակը գործում է և համայնքն ունի իր ֆուտբոլի թիմը: Համայնքի գրադարանն ունի 5320 միավոր գիրք և տեղակայված է մշակույթի տան շենքում և մշտապես գործում է:

1.16 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում են առևտրի օբյեկտներ, որոնցից 8--ը հիմնականում զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով, մեկ տնտեսական ապրանքների խանութ, մեկ դեղատուն: Բոլորն էլ հաշվառված են պետական հարկային մարմնում, ինչպես նաև եռամսյա կտրվածքով վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջե գործունեության թույլտվության համար: :

1.16 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- *Համայնքը ունի ավելի քան 250բարձրագույն կրթությամբ բնակիչ, տարբեր մասնագիտությունների տեր անձինք, որոնք կարող են կազմակերպել համայնքում տարբեր բնագավառների հետ կապված աշխատանքներ*
- *Համայնքում մեծ աշխատուժի առկայություն*
- *Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար առկա հողային բավականին մեծ ռեսուրսների առկայությունը*
- *Համայնքի բարենպաստ կլիման*
- *Համայնքում առկա միջնակարգ դպրոցի գործելը*
- *Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը*
- *Համայնքում խմելու ջրի ներհամայնքային համակարգի 6 ժամյա առկայությունը*
- *Համայնքային բոլոր փողոցների լուսավորումը*
- *Համայնքում գազամատակարարման առկայությունը*
- *Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքը Երևան քաղաքի և այլ շուկաներում սպառելու հնարավորությունը*

1.17 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- *Ճանապարհների, խմելու և ոռոգման ջրերի ցանցերի անմխիթար վիճակ*
- *Բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողների գործազրկության բարձր մակարդակը,*
- *Գյուղատնտեսական մթերքների իրացման, շուկայական ցածր գների պատճառով գյուղացու եկամուտների նվազում*
- Բուժամբուլատորիայի շենքի խիստ անբարեկարգ վիճակը:
- Ջրահեռացման կենտրոնացված համակարգերի (կոյուղու) բացակայությունը
- Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ թիվը
- Համայնքում տարեցտարի շարունակվող արտագաղթը՝ իր բոլոր բացասական հետևանքներով
- ոռոգման ցանցի կիսախողովակների տեղադրումը

1.18 ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մեծ աշխատուժի առկայություն
- Բարձրագույն կրթությամբ և բարձր որակավորում ունեցող մասնագետների առկայություն:

1.19 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Համայնքում ոռոգումը իրականացվում է մեխանիկական եղանակով, պոմպերի միջոցով, պոմպերի խափանման և հոսանք չլինելու դեպքում համայնքը կզրկվի ոռոգումից: Չկան խողովակներ և կիսախողովակներ խմելու ջրի և ոռոգման ցանցերի վերանորոգման համար :

*Համայնքում բնակիչների հարկային պարտավորությունների կատարման ոչ բավարար վիճակը:

- Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը:
- Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը և վատանում է համայնքի դեմոգրաֆիական վիճակը:

* խմելու ջրի ներհամայնքային ցանցի անհետաձգելի վերանորոգման անհրաժեշտությունը, կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի-ցանց կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների պատճառ:

1.20 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքում վերջին տարիների ընթացքում նկատելի էր որոշակի դրական տեղաշարժ ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում: Ներկայումս նոր ձևավորված ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ–երի կողմից կազմակերպված հանրային հանդիպումներին ու միջոցառումներին: Համայնքներում կազմակերպվում են հանրային լսումներ և քննարկումներ (մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը և աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի շատ ակտիվ բնակիչներ: Հիմնականում բոլոր միջոցառումների մասին տեղեկատվությունները, ավագանու նիստերի բոլոր որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների ու կարգադրությունների կրկնօրինակները տեղադրվում են համայնքապետարանի հայտարարությունների տախտակին, որն էլ ավելի է մեծացնում բնակչության վստահությունը: Համայնքի ավագանու կողմից ընդունվել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, որոնք մեծապես կնպաստեն բնակիչների ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:

1.21 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը ներկայումս սաղմնային վիճակում է:Համայնքը ունի բնակչության տարհանման հանձնաժողով, բնակչության տարհանման գործողությունների պլան, ՔՊ պլան: :

Համայնքում առայժմ՝ չի իրականացվել տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների գնահատման որևէ գործողություն, որի հիման վրա հնարավոր կլիներ պլանավորել ու իրականացնել համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման նպատակամետ գործողություններ ու միջոցառումներ: Այս խնդիրը կարևոր է, համայնքին սպառնացող աղետների ռիսկի կանխմանը :

1.22 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող ԱՁ-ներով, առևտրի մանր կետերով, որոնց հետ ՏԻՄ-երը պաշտպանում են լավ ու բարյացակամ հարաբերություններ: Համայնքի բնակիչների ստվար խումբ իր գործունեությունը ծավալում է արտերկրում/հիմնականում Ռուսաստանի Դաշնությունում/, սակայն դրանով համայնքում բիզնեսի վիճակն արանձնապես բարվոք համարել չի կարելի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Խելամտորեն օգտագործել համայնքի ֆինանսական միջոցները,
- Խթանել Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ակտիվությունը, լավագույն ձևով տեղեկացնել բնակչությանը հարկային օրենսդրությանը, հնարավորինս բարձրացնել համայնքային ծառայողների և այլ աշխատողների աշխատավարձերի դրույքաչափերը:
- Էականորեն բարձրացնել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը բնակչության շրջանում տանելով ակտիվ բացատրական աշխատանքներ, ներդնել տեղեկատվական արդի համակարգեր:
- Բարձրացնել Տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնության մակարդակը մշակելով և իրականացնելով նպատակամետ ու արդյունքահեն համայնքային քաղաքականություններ, ռազմավարություններ և ծրագրեր:
- Ապահովանաբար ընդլայնել համայնքի բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների շրջանակը, կիրառել յուրաքանչյուր ծառայության մատուցման մասշտաբի էֆեկտը (նվազեցնելով ծառայության միավորի վրա կատարվող ծախսերը), ըստ այդմ բարձրացնել ծառայությունների մատուցման ծավալները և արդյունավետությունը, և, որպես հետևանք, բնակչությանը դրանց հասանելիության և որակի մակարդակները:
- Համայնքի տարածքում նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի (հատկապես գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի և այլնի) զարգացմանը՝ օգտվելով համայնքում բնական պաշարների և այլ արժեքների առկայությունից
- Մեղմացնել համայնքում Տեղական Ինքնակառավարման վրա բնակիչների ազգակցական կապերի հնարավոր բացասական ազդեցությունները:
- Նպաստել համայնքի ավագանու ինստիտուտի կայացմանը, որի շնորհիվ կուժեղանա համայնքի ներքին վերահսկողության համակարգը և արդյունքում, կբարձրանա համայնքի ընդհանուր կառավարման արդյունավետությունը:
- Բարձրացնել համայնքի Տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների և համագործակցության մակարդակը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների հետ՝ նպաստելով համայնքի աստիճանական զարգացմանը
- Հնարավորինս արագ կայանալ և պատրաստ լինել՝ ընդունելու և իրականացնելու Տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով ակնկալվող նոր սեփական և պատվիրակված լիազորություններ՝ համապատասխան ֆինանսական միջոցներով:
- Համայնքում ստեղծել լուրջ նախադրյալներ և նպաստավոր պայմաններ ժողովրդագրական աճի, սոցիալ-տնտեսական և տեղական ժողովրդավարության զարգացման համար՝ ավելացնելով ընտանիքների եկամուտները և բարձրացնելով բնակչության ընդհանուր կենսամակարդակը, հաղթահարելով աղքատությունը և կանխելով արտագաղթը:

- Համայնքի վարչական տարածքում զարկ տալ ջերմոցների ստեղծմանը՝ նպաստելով գյուղատնտեսության զարգացմանը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Նոր կյանք համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, ծաղկաբուծության , մաքուր, բարեկարգ, ուժեղի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող տարածք:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- չխոչընդոտել համայնքի զարգացմանը խոչնդոտող պատճառները և ապահովել համայնքի աստիճանական ինտեգրումը և համաչափ զարգացումը,
- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների անտիճանական մեծացում՝ անասնագլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի, բանջարեղենի հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծում և գործարկում,
- համայնքի տարածքի համեմատական առավելությունների բացահայտում և առնտրայնացում, այդ նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների համագործակցության շրջանակների ընդլայնում և ջանքերի մեկտեղում,
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, ջրահեռացման և բուրդ փողոցներում արտաքին լուսավորության համակարգերի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում, ավտոկանգառների ժամանակակից տաղավարների կառուցում,
- համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- համայնքի Տեղական ինքնակառավարման մարմինների , աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների աստիճանական հզորացում, տեղական ժողովրդավարության ամրապնդում, համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների հետևողական իրականացում,
- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների ներգրավվածության բարելավում՝ բնակիչների մասնակցության ձևերի ներդրման և զարգացման միջոցով,
- Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում,

- համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների ներդրում և հետևողական կիրառում,
- նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:

Համայնքի զարգացման 2019-2023թթ. ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում՝ մասնակցության նոր մեթոդների և ձևերի ներդրման և աստիճանական զարգացման միջոցով,
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության, թռչնապահության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձների, վարելահողերի, նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում ,
- համայնքի բնակչությանը հանրային ծառայություններ մատուցող համայնքային հիմնական ենթակառուցվածքների(մանկապարտեզի, բուժամբուլատորիայի)շենքերի հիմնանորոգում ,
- համայնքում գործարար միջավայրի բարելավում՝ նոր աշխատատեղեր ստեղծող անհատներին և կազմակերպություններին խրախուսելու (օրինակ, տեղական հարկերի, տուրքերի և վճարների գծով արտոնություններ տրամադրելու) միջոցով:

3.ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

2019-2023թ.թ. ընթացքում համայնքի Տեղական ինքնակառավարման մարմինները նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական Կազմակերպությունների, Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2019-2023թթ.-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով:
- Համայնքում ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգում կամ մասնակի վերանորոգում և ջրամատակարարման բարելավում՝ համագործակցության ներգրավելու կազմակերպությունը::
- Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում:

- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, արտակարգ իրավիճակներում համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

2019-2023թթ. ընթացքում Հայաստանում ընթացող վարչատարածքային բարեփոխումների և (կամ) միջհամայնքային համագործակցության շրջանակներում նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները

- ՀՏԶ-ի հետ «Համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգման և սպասարկման, դպրոցականների ու երիտասարդության շրջանում բնապահպանական և ազրոբիզնեսի կառավարման գիտելիքների տարածում» ծրագիրը:
- Հնարավոր այլ ծրագրեր ու միջոցառումներ:

2019-2023թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում գործունեություն ծավալող միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները:

Formatted: Indent: First line: 0"

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Կատարելով համայնքի 2019-2023թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումները՝ պետք է հաշվի առնել

1) Համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսման համար որպես ելակետային տվյալներ են ընդունվել 2014-15թթ. բյուջեների մուտքերի փաստացի գանձման ցուցանիշները՝ յուրաքանչյուր տարի նախատեսելով որոշակի աճ: Մուտքերի աճը նախատեսվել է՝ հիմք ընդունելով համայնքի հետագա զարգացման հետ կապված պատկերացումներն ու ակնկալիքները, նոր ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը, դրանց դիմաց վճարների գանձման հնարավորությունները և այլն:

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գումարները կանխատեսելու համար, որպես 2018թ. ցուցանիշ հիմք է ընդունվել նախկին տարիների ելակետային տվյալները:

Աղյուսակ 3. Համայնքի 2014-2015թ.թ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2018-2022թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

	Մուտքերի անվանումը	2016. փաստ.	2017թ. նախատ.	2018թ. փաստ.	2019թ. նախատ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	59144.4	59161.8	59261.8	67237.8	67337.8	67387.8
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)	58744.4	58767.4	58867.4	58937.4	59017.4	59087.4
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	24201,0	24224.0	24324.0	24394.0	24474.0	24544.0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	13050,0	12950,0	13000,0	12950	13000	13050
	Գույքահարկ շենքերի և շինությունների	730.0	720,0	720.0	700.0	700.0	700.0

	համար						
	Հողի հարկ	12320,0	12230,0	12280,0	13050	13100	13100
1.2	Գույքային հարկեր այլ գույքից						
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	10826.,0	10750,0	10800,0	12250	12300	12350
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ						
	Տեղական տուրքեր	325,0	524,0	524,0	450	460	480
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ						
	Պետական տուրքեր						
1.5	Այլ հարկային եկամուտներ						
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ						
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բեռգավորում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ						
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	34543.4	34543.4	34543.4	34543.4	34543.4	34543.4
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ						
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ						
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ						
ա)	Պետական բյուջեից ֆինանսական	34543.4	34543.4	34543.4	34543.4	34543.4	34543.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 3-Ն

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով

Ավագանին որոշում է՝

Հաստատել Նոր Կյանք համայնքի ղեկավարի 2018 թվականի ֆինանսական գործունեությունը ըստ ներքոհիշյալ եկամուտների և ծախսերի .

Եկամուտները ընդամենը-79189.1հազարդրամ
1.Գույքահարկ համայնքի

վարչական տարածքում գտնվող գույքի համար-10941.5հազ. դրամ
2.Հողի հարկ համայնքի վարչական տարածքում -11901.6հազ.դրամ
3.Տեղական տուրքեր -581.4հազ. դրամ
4.Հողի վարձավճար -191.0 հազ. դրամ
5.Տեղական վճար -4403.4հազ.դրամ
6.Դոտացիա -34543.4 հազ.դրամ
7.Տարեսկզբի մնացորդ -13692.0հազ. դրամ
8.Համայնքի սեփականություն

համարվող գույքի վարձակալությանվճար -74.8հազ.դրամ

9.Վարչական տույժ և տուգանք -2860.0 հազ.դրամ

Ծախսեր ընդամենը -65837.2հազարդրամ

1.Կառավարական մարմնի պահպանում -18818.1հազար դրամ

հոդված - 4111- 14725.0 հազար դրամ
հոդված - 4112 - 1086,0 հազար դրամ
հոդված - 4212 –43.6 հազար դրամ
հոդված - 4213 –155.3 հազար դրամ
հոդված - 4214 –168.7 հազար դրամ
հոդված -4215 -70.0 հազար դրամ
հոդված -4232 - 79.2 հազար դրամ
հոդված -4234 -197.0 հազար դրամ

հոդված -4241 -357.0 հազար դրամ
հոդված -4252 -156.0 հազար դրամ
հոդված -4261 -194.0 հազար դրամ
հոդված -4264 -592.0 հազար դրամ
հոդված -4267- 98.2 հազար դրամ
հոդված -4269- 202.1 հազար դրամ

հոդված -4823 - 10.0 հազար դրամ

հոդված -5129 -684.0 հազար դրամ

2.Աղբահանություն -3840.0 հազար դրամ

հոդված -4213-3840.0հազար դրամ

3. Փողոցների լուսավորում-7270.3 հազար դրամ

հոդված -4212-1181.0 հազար դրամ

հոդված -4252 1624.3 հազար դրամ
հոդված -5112-4195.0 հազար դրամ
հոդված -5134-270.0 հազար դրամ

4.Նախադպրոցական կրթություն-21753.4 հազար դրամ

հոդված -4639-16400.0 հազար դրամ
հոդված -5112-5233.4 հազար դրամ
հոդված -5134-120.0 հազար դրամ

5.Մշակույթի տներ,ակումբներ-7744.5 հազար դրամ

հոդված 4111-6116.0 հազար դրամ
հոդված 4112-350.0 հազար դրամ
հոդված 4212-1169.0 հազար դրամ
հոդված 4241-109.5 հազար դրամ

6.Մշակույթ,հանգիստ,կրոն- 997.6 հազար դրամ

հոդված 4216-65.0 հազար դրամ
հոդված 4637-932.6 հազար դրամ

7. Գյուղատնտեսություն-370.0հազար դրամ

հոդված 4111 -120.0 հազարդրամ

հոդված 4269-250.0 հազար դրամ

8.Սոց.հասարակական նպաստներ-3160.0 հազար դրամ

հոդված-4726-480.0 հազար դրամ
հոդված -4727-100.0 հազար դրամ
հոդված 4729-2580.0 հազար դրամ

9. Հանրակրթական ուսուցում-100.0 հազար դրամ

հոդված -4637-100.0 հազար դրամ

10.Առողջապահություն-100.0 հազար դրամ

հոդված -4637-100.0 հազար դրամ

11.Սոց. անապահով աշակերտներին անվճար և օժանդակ ծառայություն-1070.5 հազար դրամ

հոդված -4252-175.3 հազար դրամ
հոդված -4264-895.2 հազար դրամ

12.Թափառող կենդանիներին վնասազերծում -200.0 հազար դրամ

հոդված- 4241-200.0 հազար դրամ

13.Ճանապարհային տրանսպորտ–112.8 հազար դրամ

հոդված 4252-112.8 հազար դրամ

14.Ջրային կառույցների շահագործում և պահպանում 300.0 հազար դրամ

հոդված 5134 -300.0 հազար դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՄՄԱ

ԱՄԻՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՂՎԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 4-Ն

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով՝

Ավագանին որոշում է.

Հաստատել Նոր Կյանք համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեն՝ տարեվերջյան մնացորդով և ֆոնդային բյուջեի հետևյալ տեսքով.

ա/ Եկամտային մաս	-67237.8 հազար դրամ
բ/ Ծախսային մաս	-67137.8 հազար դրամ

ա/ Եկամտային մասը ըստ եկամտատեսակների բաշխված է հետևյալ չափով.

1. Հարկեր և տուրքեր	-26000,0 հազար դրամ
ն/թ 1/1 Գույքային հարկեր անշարժ գույքից	-13750,0 հազար դրամ
ն/թ գույքահարկ շենքի և շինությունների	-700,0 հազար դրամ
որից ֆիզիկական անձանցից	-700,0 հազար դրամ
Հողի հարկ	-13050,0 հազար դրամ
ն/թ ֆիզիկական անձանցից	-13050,0 հազար դրամ
1/2 Գույքահարկ փոխադրամիջոցներից	-12250,0 հազար դրամ
1/3 Տեղական տուրքեր	-450,0 հազար դրամ
ն/թ շինությունների շինարարության թույլտվության համար	-40,0 հազար դրամ
որից հիմնական շինությունների համար	-40,0 հազար դրամ
Ծխախոտի վաճառքի թույլտվություն	-180,0 հազար դրամ
Խմիչքների իրացման համար	-180,0 հազար դրամ
Արտաքին գովազդի համար	-50,0 հազար դրամ
2/5 Ընթացիկ ներքին դրամաշնորհներ /դոտացիա/	-34543.4 հազար դրամ
3/3 Գույքի վարձակալությունից մուտքեր	ընդ. -394,4 հազար դրամ
ն/թ հողի վարձակալություն	-394,4 հազար դրամ

3/4 Բյուջեյիեկամուտներ	ընդ. -2750,0 հազար դրամ
Աղբահանությանվճար	-2750,0 հազար դրամ
3/5 Վարչականգանձումներ	ընդ. -3100,0 հազար դրամ
Ծնողականգումարներ	-3100,0 հազար դրամ

բ/ Ծախսային մասը բաշխվում է հետևյալ չափով.

1. Կառավարման ապարատ	ընդ. -22676,0 հազար դրամ
ն/թ աշխատավարձ /հոդված 4111/	-18276,0 հազար դրամ
Պարգևատրումներ /հոդված 4112/	-1430,0 հազար դրամ
բանկային ծառայություն /հոդված 4211/	-50,0 հազար դրամ
կոմունալ ծառայություն /հոդված 4213/	-200,0 հազար դրամ
կապի ծառայություն /հոդված 4214/	-250,0 հազար դրամ
ԱՊՊԱ ծառայություն /հոդված 4215/	-200,0 հազար դրամ
համակարգչային ծառայություն /հոդված 4232/	-200,0 հազար դրամ
տեղեկատվական ծառայություն /հոդված 4234/	-200,0 հազար դրամ
մասնագիտական ծառայություն/հոդված 4241/	-300,0 հազար դրամ
մեքենաների ընթացիկ նորոգում /հոդված 4252/	-200,0 հազար դրամ
գրասենյակային նյութեր /հոդված 4261/	-250,0 հազար դրամ
տրանսպորտային նյութեր /հոդված 4264/	-600,0 հազար դրամ
Կենցաղ. հանր. սննդի նյութեր /հոդված 4267/	-150,0 հազար դրամ
Հատուկնպատակային նյութեր /հոդված 4269/	-300,0 հազար դրամ
այլ հարկեր /հոդված 4823/	-70,0 հազար դրամ
2. «Նոր կյանքի մանկապարտեզ» ՀՈԱԿ	ընդ.-16600,0 հազար դրամ
ն/թ այլ ընթացիկ դրամաշնորհներ /հոդված 4637/	-16600,0 հազար դրամ
3. Մշակույթ, հանգիստ, կրոն	ընդ.-1200,0 հազար դրամ
ն/թ գույքի վարձակալություն/հոդված 4216/	-200,0 հազար դրամ
Այլծառայութ. ձեռքբերում/հոդված 4239/	-1000,0 հազար դրամ
4. Հիմնական ընդհանուր կրթություն	ընդ.-200,0 հազար դրամ
ն/թ այլ ընթացիկ դրամաշնորհներ /հոդված 4637/	-200,0 հազար դրամ
5. Սոց. անապահովաշակերտ. ավճարծառ.	ընդ.-1250,0 հազար դրամ
մեքենաների ընթացիկ նորոգում /հոդված 4252/	-300,0 հազար դրամ
տրանսպորտային նյութեր /հոդված 4264/	-950,0 հազար դրամ
6. Առողջապահություն	ընդ.-100,0 հազար դրամ
ն/թ այլ ընթացիկ դրամաշնորհներ /հոդված 4637/	-100,0 հազար դրամ

7. Փողոցների լուսավորություն ընդ. -2000,0 հազար դրամ

ն/թ էներգետիկ ծառայություն/հոդված 4212/ -1600,0 հազար դրամ

ընթացիկ նորոգում /հոդված 4252/ -400,0 հազար դրամ

8. Թափառող կենդանիների վնասազերծում ընդ.-200,0 հազար դրամ

ն/թ մասնագիտական ծառայություն/հոդված 4241/ -200,0 հազար դրամ

9. Գյուղատնտեսություն ընդ.-250,0 հազար դրամ

ն/թ հատուկ նպատակային նյութեր/հոդված 4269/ -250,0 հազար դրամ

10. Աղբահանում ընդ.-3840,0 հազար դրամ

ն/թ կոմունալ ծառայություն /հոդված 4213/ -3840,0 հազար դրամ

11. Սոցնպաստներ ընդ.-3700,0 հազար դրամ

ն/թ հուղարկավորման ծախսեր/հոդված 4726/ -500,0 հազար դրամ

կրթական մշակույթ և սպորտային նպաստներ/հոդ. 4727/ -500,0 հազար դրամ

այլ նպաստներ/հոդված 4729/ -2700,0 հազար դրամ

12.Հասարակական կազմակերպություններին աջակցություն ընդ.- 300,0 հազար դրամ

ն/թ նվիրատվ. այլ շահույթ չհետապնդող կազմակերպ. /հոդված 4819/ -300,0 հազար դրամ

13. Մշակույթի տներ, ակումբներ ընդ.-9470,0 հազար դրամ

ն/թ աշխատավարձ /հոդված 4111/ -7080,0 հազար դրամ

պարգևատրումներ /հոդված 4112/ -440,0 հազար դրամ

էներգետիկ ծառայություն/հոդված 4212/ -1600,0 հազար դրամ

մասնագիտական ծառայություն/հոդված 4241/ -250,0 հազար դրամ

ընթացիկ նորոգում և պահպանում/հոդված 4251/ -200,0 հազար դրամ

14. Ճանապարհտրանսպորտ ընդ.-150,0 հազար դրամ

ն/թ Ընթացիկնորոգումևպապանում/հոդված 4251/ -150,0 հազար դրամ

15. Անասնաբուժական ծառայություն ընդ.-520,0 հազար դրամ

ն/թ աշխատավարձ /հոդված 4111/ -520.0 հազար դրամ

16.Պահուստային ֆոնդ ընդ.-4781.8 հազար դրամ

ն/թ պահուստային միջոցներ/հոդված 4891/ - 4781.8 հազար դրամ

ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1.Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից մուտք ֆոնդային բյուջե -10462.3913 հազար դրամ

2.Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ, որն ուղղվում

է ծախսերի ծածկմանը -6313.3956 հազար դրամ

-16775.7869 հազար դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

ՀՀ	ՀԱՏՎԱԾ	ՀՈԴՎԱԾ								
		5112-շենքերի և շինությունների կառուցում	5113-շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5121-տրանսպորտային սարքավորումներ	5122-վարչական սարքավորումներ	5129-այլ մեքենաների սարքավորումներ	5133-գեոդեզ զաքարտեզավորում	5134-նախագծահետախուզում	5411-Ակտիվների ձեռքբերում	ԸՆԴԱՄԵՆԸ
1	Ոռման ցանցի կառուցում		6025.7869					300.0		6325.7869
2	Մանկապարտեզի նորոգում					1000.0				1000.0
3	Խմելու ջրագծի կառուցում		3500.0							3500.0
4	Փողոցների խճապատում		950.0					100.0		1050.0
5	Այլ մեքենաներ և սարքավորումներ				1000.0				3900.0	4900.0
	Ընդամենը		10475.7869		1000.0	1000.0		400.0	3900.0	16775.7869

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՄՄԱ

ԱՄԻՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՂՎԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Կյանք համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Կյանք, ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 5-Ն

ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջներով՝

Ավագանին որոշում է.

Հաստատել Նոր Կյանք համայնքի տարեվերջյան գույքագրման արդյունքների ամփոփումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷՄՄԱ
ԱՄԻՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՂՎԱՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ